ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկաի համար եռամսեայ 1 տոլար թղթադրամ.
Եւրոպաի և այլ տեղերի համար » 5 ֆրանգ
» » » » տարեկան 2 »
Հատով կը ծախուի 20 սանտիմ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնորդագրութիւնները կը սկսին տարագլուխներէն (Ն. Տ.)։
Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia* MARSEILLE (France)

Գ ՏԱՐԻ ԹԻՒ 85

1888 ՅՈՒՆԻՍ 16
ՅՈՒՆԻՍ 4 (Հ. Տ.)
ՇԱԲԱԹ
Կը հրատարակուի Դշ. և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱԾՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։
Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրներն։
Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Rue Vacon, 50)

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ,, Ի Դ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ

(1888 ՕԳՈՍՏՈՍ—89 ՅՈՒԼԻՍ)

Բաժնորդ գլուխի կամքին թողուած է որոշել իւր բաժնորդագին, պայմանով որ յետագայ գիներէն պակաս չլինի.

Ամերիկաի համար տարեկան մինչեւ 2 տոլար թղթադրամ.
Պարսկաստանի համար տարեկան մինչեւ 4 րուբլի թղթադրամ.
Եւրոպաի և այլ տեղերի համար տարեկան մինչեւ 10 ֆրանգ.

Վեցամսեայ և եռամսեայ բաժնորդագրութիւնները ալ կընդունուին առանց տեւէ յառելում անելու, այսինքն վեցամսեայն մինչեւ 5 ֆրանգ և եռամսեայն մինչեւ 2 ½ ֆրանգ. նոյն համեմատութեամբ հաշուելով նաեւ Ամերիկաի և Պարսկաստանի համար։

Հատով պիտի ծախուի 10 սանտիմ ամեն տեղ։

Լրագրի տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ԱՍՊԱՏԱԿ ՀԱՅԵՐ

ՆՈՒԷՐ

ԱՌ

ՀԱՅՆԱԶՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

Գրեց ՄԿՐՏԻՉ Ս. ԹԻԹԻՒՆՃԻԼՃԱ

Վիրաբոյժ ի Բասմռգ

(Շար. 84րդ բաւն)

Երկու հայրենասէր նահատակաց մարմինները Սէբաստիոյ արեւմտեան կողմը անցնելու համար, փոքրիկ գագաթի մը վրայ պատրաստուած երկու դերեզմանաց մէջ ամփոփեցին զանոնք. թաղման արարողութիւնը կատարեց Պապիկ աւազակապետն. նա ոչ կարդալ գիտէր և ոչ աղերս. բերանացի ինչ աղօթք որ սորված էր, այն ըրաւ ու հեռացան անկից։ Դաւիթ իւր նշանածին մեռնելէն վերջը ամեն օր կերթար նրա դերեզմանին վրայ ջերմաջերմ արտասուք կթափէր ու կըսէր. Ա՜հ, Աստուած իմ, ի՞նչ ըրած եմ քեզի դէմ որ մէկա կը հարուածուիմ. արդեօք անիծա՞ծ եմ պիտ մինչ մօրս արգանդին մէջ էի։ Բարի աւազակապետը ամեն առեն կմխիթարէր և կըսէր. Դաւի՛թ, որդեա՛կ իմ, հայրենեաց նահատակի մը համար արցունք թափելը յանցանք է. մի՛ լար անոր վրայ մինչդեռ հայրենիք կը ժպտի. մի միայն յարդէ իւր յիշատակը. այժմ պէտք է գոցենք իւր փառաւոր դերեզմանը ու չխռովենք իւր դիւցազնական քունը։ Որդեա՛կ, պէտք է խորհինք մեր արդի անորոշ կացութեանը վրայ. ահա միայն չորս հոգի մնացինք. գիտեմ որ մենք ալ պիտի զոհուինք վասն հայրենեաց, բայց գոնէ սուբ ի ձեռին մեռնինք և երբէք անձնատուր չլինինք այդ վատազգի մարդոց։ — Ո՛վ հայր հոգեւոր, պատասխանեց Դաւիթ. քու խորհրդիդ և հրամանիդ պատրաստ եմ. ամօթ և նախատի՛նք մեզ, եթէ մեր սիրելեաց վրէժը չառնուինք մեր թշնամիներէ։—Ուրեմն վրէ՛ժ կպահանջէ՞ք Սպարթուղլահի խմբէն. թող այնպէս լինի. օ՛ն, պատրաստ եղէք, որդեակներս, ըսաւ ծերունին ու ոտքի ելաւ. այժմ պէտք է ուղղակի Մլէթախ լինենք ու գիշերային խաւարի առեն մեր վրէժը առնուինք. կընդունի՞ք այս խորհուրդս։ —կընդունինք, Թո՛ղ այդպէս լինի, աղաղակեցին ամենքն ալ։ — Գեղա՛մ, դու այժմ ճամբայ ելիր Մլէթախ երթալու. Քուրդերը քու վրայ չեն կասկածիր. մեզ համար պիտի գըտնես մի իրիկուն ուր մենք երկու օր ապասանինք. մենք ալ այս գիշեր կհասնինք։ — Պատրաստ եմ հրամանիդ կատարելու, յարեց Գեղամ և համբուրեց աւազակապետի ձեռքն ու ճամբայ ելաւ։

Շէյխ Սապաթուլլահ երբ լսեց Քրդաց և Հայոց մէջ տեղի ունեցած պատերազմը և իմացաւ որ Հայեր տասն Քուրդ սպանած և յոպիած են նոցա, առաջին անգամ ասկաց, բայց յետոյ կատղեցաւ և Մլէթախի բոլոր Հայերը իր մօտ կանչեց տեղեկութիւն առնելու համար. այլ սակայն և ոչ մի զաղտնի գործ գիտէին նոքա, բայի Մշոյն, քանզի Մշո երկուտ ըլլալով վախուտ տուած էր Պապիկի խմբէն և Սապաթուլլահի կենդանեացը ծառայելու պաշտօնը նորէն ստանձնած էր։ Նոյն օրը կէս օրէ մէկ ժամ առաջ Գեղամ մտաւ ի Մլէթախ և առանց երկինչելու գիւղին մէկ ծայրէն միւսը չրջագայեցաւ. իր բարեկամները տեսան պինք և

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նամակ Թիւրքիաեն (Երզնկա).—Մաշի դէպքը. — Բ. Դուռը եւ Հայեր. — Գ. Բաղէշցեաց եւ Մ. Նաբաւեան.—Հայեր ի Թիւրքիա. — Հայեր ի Պուլկարիա. — Տեղական. — Հ. Զ. Միւռեան ի Ցպատ հանգանակութիւն Քիւօսեհնճի մէջ. —Նոր հրատարակութիւն. — Ամանիաի Թիւրքիկ կայսրի մահը. — Եաճաի միջադէպը. —Արտասահմանի լուրեր. — Յանուցումներ. — Բանասիրական (Երկու ասպատակ Հայեր).

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱԷՆ

Երզնկա, 7/19 մայիս 1888

Թուէս մի քանի ամիս յառաջ Երզնկա գինով գինուորներ 14 տարեկան պատանի մը բռնաբարել ուզեցին. Հայ երիտասարդք տեսնելով դայս, չկրցին հանդուրժել. տասին պատանին գինուորաց ձեռքէն։ Այս պատճառով կռիւ ծագեցաւ երիտասարդաց ու գինուորաց մէջ և այդ կռուին գոհ եղաւ 22 տարեկան ազգայդ և նոր ամուսնացած երիտասարդ մը, Ռուբէն Մչեկեան։

Երէք ամիս յառաջ Երզնկայի մէջ մի քանի անձինք ուզելով ընկերութիւն մը հաստատել դեղարան բանալու համար, հրաւիրեցին Ահնեցի Պր.

Նշանը որ կենայ իրենց դեղարանի մէջ և վարէ դեղագործութեան պաշտօնը։ Այդ Պարոն՝ Երզնկա հասածին պէս, մատնութեամբ ինկաւ կառավարութեան ձեռքն։ Քննուեցաւ և ոչինչ գտնուեցաւ իւր քով, միայն Տփղիս տպուած երգարան մը. և այս պատճառով բանտարկուած է մինչեւ ցարդ. հեռը խօսակցելու իսկ իշխանութիւն չեն ըներ չատ անգամ. և եթէ ընեն ալ, տաճկերէն խօսակցելու է։

Երկու ամիս յառաջ 20 տարեկան հայ երիտասարդ մը կարնէն գալով Բէժախ պիտի երթար գաստառութեան. կառավարութիւնը դինք ձերբակալեց և քննութեան ենթարկուելով ոչինչ գտնուեցաւ իւր քով, միայն իւր հեղինակութեամբ մի ազգային երգ ձեռագիր։ Կրեց տասն մը բանտարկութիւն Երզնկայի մէջ, յետոյ ղրկուեցաւ Կարին։ Մինչդեռ հարցաքննութեան տակ էր, իւր երգին մէջ տեսան մի այլ դէչագիր. երբ հարցուեցաւ թէ որո՞ւ է այդ գիրը, երիտասարդը պատասխանեց թէ «դատուած է»։ այդ պատճառով դատուն եւս բանտարկուեցաւ և այդ երկուքին եւս ազատման վախը կը տիրէ այժմ շատ տեղեր։

ուղղակի Մլէթախ լինենք ու գիշերային խաւարի առեն մեր վրէժը առնուինք. կընդունի՞ք այս խորհուրդս։ —կընդունինք, Թո՛ղ այդպէս լինի, աղաղակեցին ամենքն ալ։ — Գեղա՛մ, դու այժմ ճամբայ ելիր Մլէթախ երթալու. Քուրդերը քու վրայ չեն կասկածիր. մեզ համար պիտի գըտնես մի իրիկուն ուր մենք երկու օր ապասանինք. մենք ալ այս գիշեր կհասնինք։ — Պատրաստ եմ հրամանիդ կատարելու, յարեց Գեղամ և համբուրեց աւազակապետի ձեռքն ու ճամբայ ելաւ։

Շէյխ Սապաթուլլահ երբ լսեց Քրդաց և Հայոց մէջ տեղի ունեցած պատերազմը և իմացաւ որ Հայեր տասն Քուրդ սպանած և յոպիած են նոցա, առաջին անգամ ասկաց, բայց յետոյ կատղեցաւ և Մլէթախի բոլոր Հայերը իր մօտ կանչեց տեղեկութիւն առնելու համար. այլ սակայն և ոչ մի զաղտնի գործ գիտէին նոքա, բայի Մշոյն, քանզի Մշո երկուտ ըլլալով վախուտ տուած էր Պապիկի խմբէն և Սապաթուլլահի կենդանեացը ծառայելու պաշտօնը նորէն ստանձնած էր։ Նոյն օրը կէս օրէ մէկ ժամ առաջ Գեղամ մտաւ ի Մլէթախ և առանց երկինչելու գիւղին մէկ ծայրէն միւսը չրջագայեցաւ. իր բարեկամները տեսան պինք և

հարցուցին թէ այնչափ տասն ո՞ր անյայտացած էր. նա ալ պատասխանեց թէ Ուրանիա և Փալաձոր գիւղերու մէջ մանրավաճառութիւն կընէր։ Աւելի լաւ էր որ հոս չգտնուեցաւ, յարեց բարեկամաց մին։ Շատ բաղդաւոր ես եղեր, ըսաւ միւսը։ Գեղամ հարցուց թէ ի՞նչ պատահած էր. այնպէս կը ձեւացնէր որ և ոչ մէկ բանէ մը տեղեկութիւն ունէր։ Երկու բարեկամները իրեն պատմեցին Քրդաց և Հայոց մէջ տեղի ունեցած կռիւը։ Գեղամ զարմացմամբ ըսաւ. խե՞նթ էք դուք. այդպիսի բան մը ո՞ր տեսնուած և լսուած է. զարմանալի՛ բան. Հայը Քուրդին դէմ պատերազմի՛. ոչ, ոչ, խաբեր են ձեզ։ Դարձեալ Մլէթախցիներուն միւն բարկութեամբ պատասխանեց Գեղամ. դո՛ւ ես խենթը որ մեր պատմածին չես հաւատար։ Ես իմ աչօքս տեսայ տասն հատ արիւնաթաթաւ Քրդի դիակ, յարեց միւսն։ Կարելի է, ըսաւ Գեղամ ու գնաց իւր խրճիթը։

Գեղամի ծերունի մայրը երբ տեսաւ իւր որդին, խնդալով դիմաւորեց. ոչ ոք կարող էր գուշակել Գեղամի գաղտնիքը և չէին կասկածեր երբէք. նա իրրեւ աղուհ ցոյց կուտար ինքզինքը այս անգամ Մլէթախցիներու։ Գեղամ իւր մօրը հրա-

Ձիշդ այս ժամանակս մի քահանայ, բնիկ Սղերդցի, որ կը պարտէր իր ընտանիքի ապրուստն հայթայթելու համար, բանտարկուեցաւ Քամախի մէջ, որովհետեւ իր քով գըտնուեցան մի քանի յանձնարարական նամակները դրսս իրեն տուած էր Երզնկայի Առաջնորդական Տեղապահ Հայրն, ինչպէս նաեւ մի ձեռագիր երգ։ Քահանային տունն մը բանտարկութիւն կրեց Քամախի մէջ, յետոյ ղրկուեցաւ Երզնկա. երբ հարցուեցաւ թէ «ո՞ւստի անցաւ այս երգ քու ձեռքդ», պատասխանեց թէ «Դռմերցի տղէ մը» (Դռմեր՝ Քամախի գիւղերէն մին է)։ Այդ տղեկն եւս բանտարկուեցաւ, թէեւ ինքն 15–16 տարեկան է դեռ։ Հարցաքննիչը բաղդատեցին երդին ու տղեկին ձեռագիրները, բայց նմանութիւն մը չգտան. երբ հարցուեցաւ քահանային թէ «վկայ ունի՞ս որ աս տզան տուաւ քեզ», «ո՛չ» պատասխանեց քահանայն. այսու ամենայնիւ երկուքն ալ բանտարկուած կը մնան այժմ։

Ամիս մը առաջ Քէմախի Բագառիճ գիւղի բողոքական երէցը, Երզնկայի բողոքական գրածախը, այլ գաւառ մը իրենց հետ, Աբտալկերցի եւ բիւտաորդի մը ընկերակցութեամբ, կարինէն կուգային Քէմախ. կառավարութիւնը ձերբակալեց պիրենք. ասոր պատճառաւ բռնուեցաւ նաեւ գիւտաւոր վաճառական մը, քանզի այս բողոքական երէցը իրեն տուն հիւր եղած էր։ Առնչմէ ոմանք մի քանի ժամեր, ոմանք ալ մի քանի օրեր բանտարկութիւն կրեցին։ Վաճառականին տումարներն տարին կառավարութեան դուռը, ուսկից տունը եւ խուզարկեցին տիկնոջ անուններն. Երբ թղթատեցին թէ՛ սան եւ թէ՛ գրատան մէջ եղած գիրքերն աչքէ անցուցին։ Զարմանքը այս է որ հայ բողոքական երէցի ձին եւս տարին կառավարութեան դուռը ուր իրրեւ բանտարկեալ մնաց երկու ժամու չափ։ «Լաւ, ըսաւ վաճառական հայը. ես երէցին չէի վախնար դի գիտեմ թէ նա ղեռյզ է իւր խօսքերուն մէջ. բայց վախցայ որ ձին մի սխալ բան յայտնէ հարցաքննութեան առեն»։ Երանի՛ թէ երէցին ձին եւս կարող լինէր Բագառամու իշուն պէս յանդիմանել այդ անիրաւ հարցաքննիչը։

Այս մի քանի ամսէ ի վեր այս կողմերը գործադրուած այդպիսի բռնութիւններու առջեւն առնելու համար մարդ մը չգտնուեցաւ, թէեւ քանի մը հեռագիրներ տրուեցան ի Պոլիս Պատրիարքարանն եւ նամակները ղրկուեցան, ինչպէս որ Տեղապահ Հայրն ալ եկեղեցւոյ մէջ քարոզեց, բայց ի զուր. Ն. Սրբազնութիւնն ալ ձեր լինելով չէ կարող քաղաքական խընդիրներով զբաղիլ։ Այսպէս մեր բոլոր գրածներ ու խօսածներ կը մնան ձայն բարբառոյ յանապատի եւ օգուտ մը չենք տեսներ։

Երբ այս բռնութիւններ ու հալածահարութիւններ տեղի կունենան Երզնկայի մէջ ուր տէրութեան մը չորրորդ բանակատեղին է, հապա ինչե՞ր չեն ըլլար ներքին գաւառաց մէջ։

ՄՈՒՇԻ ԴԷՊՔՈՆ

Արեւելքի մայիս 28/9 յունիսի թուին մէջ կը կարդանք հետեւեալը։

«Հետեւեալ հեռագիրն առինք Մուշէն, ծանօթ դէպքին առթիւ ձերբակալեալ Դէորգ անուն անձէն։

ԱՐՏԻՆԵԼԻՒ Վարչութեան

«Հռոմէականաց առաջնորդին եւ իմ միջեւս յառաջ եկած դէպքը լրագրաց մէջ ճշմարտութեան բոլորովին հակառակ ձեւով հրատարակուած է։ կը բողոքեմ։

«Բնաւ համակրոհ կամ դրգռիչ չունիմ։

«Ցիշեալ Առաջնորդը զիս հրաւիրելով, ոգեւից ըմպելեօք գլուխս տաքցնելէ յետոյ, ուզեց իմ միջոցաւս աղջկանց վարժարանին վարժապետին (կամ.՝.՝ վարժուհւոյն) պատիւը բընաբարել։ Իւր այս առաջարկութենէն ծագեցաւ վէճ, յորում զիրար վիրաւորեցինք։

«Ա՛յս է ճշմարտութիւնը։

«Հիմակ Առաջնորդը կարգ մը զրպարտութիւններ կընէ, զորս կը հերքեմ, և իրաւունքս պաշտպանելու համար կը դիմեմ Կայսերական Կառավարութեան ծանուցեալ արդարասիրութեան։»

Ձերբակալեալ ԳԷՈՐԳ

«Տեղեկութեան համար կը հրատարակենք այս հեռագրքրաշարժ հեռագիրն այր պարունակութեան բոլոր պատասխանատուութիւնն ի հարկէ կը վերաբերի ստորագրողին։ Սակայն և այնպէս, այս հեռագիրն եւս կը ցուցնէ թէ Մշոյ դէպքին վրայ վերջին բառը լսած չենք տակաւին, և կայսերական կառավարութեան անկողմնակալ և արդարադատ քննութեամբ անչուշտ պիտի պարզուի գաղտնիքն, որով տակաւին չըմտպատեալ կերեւի այս խնդիրը։»

Բ. ԴՈՒՌ ԵՒ ՀԱՑԵՐ

Այս վերնագրի տակ կը կարդանք «Տէյլի Նիւս»ի յունիս 11ի թուին մէջ, Կ. Պօլսէն իւր թղթակցէ ղրկուած հետեւեալ հեռագիրը.

«Հայ Մասնաժողովին հանած չըջաբերականը մեծ գրգռութիւն պատճառած է։ Մի անվայել խորութիւն կը լինի Լուսաւորչական Հայերին և Կաթոլիկ Հայերին համար. այս վերջիններս սպառ կը մնան բոլոր հալածանքներէ որովհետեւ այստեղի երկու դեսպանները յայտարարած են թէ Կաթոլիկ Հայերի հաւատարմութիւնը կասկածի տակ չկրնար ընկնել։ Օսար պետութիւնների դեսպաններին այսպէս Կաթոլիկներին տրած պաշտպանութիւնը ենթադրել կուտայ թէ Լուսաւորչական Հայերը օրէնք Հայ հաւատարկութեան մեծամասնութիւնը կը կազմեն, անպաշտպան պիտի թողուին։ Նախկին դեսպաններին ժամանակ, Լուսաւորչականներն պաշտպանութիւն գտած են Դերմանացիներէն. բայց այդ ալ բոլորովին դադրած է և միայն Ռուսիան կօգնէ իրենց. այժմ կախում ունեցած են միայն Բ. Դրան բարեհաճութենէն։ Կիմանամ որ Կաթոլիկներին ցոյց տրուած մեծաշնորհին պատճառով շատ գիւղեր կը թողուն Հայաստանեայց կրօնի Լուսաւորչական դաւանութիւնը։»

Գ. Բադիճեան եւ Մ. Նաբանեան

Վանի կեդրոնական բանտին մէջ Պր. Գարեգին Բաղէշցեանին խոչուելէն յետոյ, մեռնելուն դոյժը մեծ յուզում պատճառած էր այնտեղի Հայ ժողովրդին մէջ։ Այդ տխուր տպաւորութեան տակ փութացած էին անմիջապէս հաղորդել մեզ նաեւ Վանէն այդ դոյժ, կարճ կերպով աւելցնելով նամակին մէջ այս տող թէ «Գարեգին մեռած է բանտին մէջ»։

Այնուհետեւ մի նոր թղթակցութիւն չկրցանք ստանալ Վանէն և ահա այս օրերը Վանէն եկաւ մի ճանապարհորդ որ հետեւեալ տեղեկութիւններն հաղորդեց մեզ։

Երբ Պրն. Գարեգին Բաղէշցեանի մեռնելուն դոյժը տարածուեցաւ քաղքին մէջ, ամբողջ ժողովուրդը յուզուեցաւ և գրգռութիւնը հետզհետէ ոստոհանալով, չուկային մէջ Հայերի մեծ մասը իրենց խանութները փակեցին և խմբովին դիմեցուվ Առաջնորդարան պահանջելին Դեր. Ալեքսէեանէն որ հարկ եղած դիմումներն անէ ումանկ է։ Ալեքսէեան Գրիգորիս Սրբազան դիմեց Վալիին որ յայտարարէց թէ Գարեգին թէեւ տեսութենէ արգիլուած, բայց ողջ է։ Դեր. Ալեքսէեան ժողովրդին գրգռութեանն պատճառով պահանջեց անպատճառ իր ներկայութեան բերել Գարեգինը որ և բերուեցաւ. խեղճը հազիւ կրնար նստել ամրոցին վրայ որ այնտեղ դրուած էր. խոչընդոտութեան պատճառով ծանրապէս տըկարացած էր։ Այնուհետեւ Ալեքսէեան Սրբազանի պահանջմամբը, քանի որ հարցաքննութիւններն ալ վերջացած էին, կառավարութիւնը թոյլատրեց Գարեգինի բարեկամներին անոր այցելել բանտին մէջ։

Գարեգինի խոչընդոտը այս ձեւով եղած է. գինք պատին առջեւ կանգնեցուցեր և վիզէն ու ոտքերէն շղթաներ անցուցնելէ յետոյ, թեւերը պարզեր են պատին վրայ և երկու ձեռքերէն ալ շղթաներ անցուցնելով, շղթաներուն ծայրերն բեւեռեր են պատին վրայ. այս խոչընդոտած դիրքի մէջ կանգնած, շղթաներուն տակ ծանրաբեռնուած, 48 ժամ անօթի ծարաւ մնալով հարցաքննութեան ենթարկուած է։ Այժ. Հ. Արսէն Թօխմախեանն ալ նոյն դիրքով խոչընդոտը է. բայց աւելի խստութեամբ վարուեր են Գարեգին Բաղէշցեանի հետ որ իբ հուժկու կազմուածքին պատճառով հազիւ յաջողած է կանգնիլ ժամին դէմ և ողջ մնալ։

Թիւրքիոյն ամենատոյդ տղիւրէ հաղորդուած է մեզ նաեւ հետեւեալ տեղեկութիւնը Մ. Նաթանեանի նկատմամբ.

Քոնեաի նահանգը աքսորուած վանեցի երեք Հայերն, Յովհաննէս Քանքանեան, Դէորդ Օտեան և Մ. Նաթանեան, բանտէն արձակուած էին, մնալով միշտ կառավարութեան հսկողութեան տակ, և կըբնայէն տեղեկութիւն տալ իրենց վիճակի վրայ իրենց ընտանիքի և աղգականներու։ Բաւական ժամանակ վանի մէջ նամակ չէր ստացուած Մինաթանեանէն. ո՛չ իւր ընտանիքի և ո՛չ ալ բարեկամներուն մի տող անգամ նամակ չէր գրած իւր սովորութեան հակառակ։ Այդ միջոցներ, աքսորավայրի կողմերէն դոյժ հասած էր վան թէ Մինաթանեան մեռած է։

Այժմ, ամենատոյդ տղիւրէ կը հաղորդուի մեզ թէ Թիւրքիոյ կառավարութիւնը որ այդ աքսորականներ աղատ թողած էր իւր հսկողութեան տակ, կը գրաւէ եղեր իրենց նամակներ և առժամանակ մի նամակներէ յօտնատացուելու համար, լուր է տարա-

---

ման տուաւ որ չորս հոգիի կերակուր պատրաստէ երեկոյեան համար։ Մարէ խաթունը այդ գործերով կզբաղէր. հացին գիչերուան մեծութիւնը կը տիրէր և երկնից կամարը կը չողղոջէր իր փայլուն աստղիկներովը, Գեղամ եւլա գիւղի ճամբուն վրայ գտնուած աւերակ ջաղացքի մը մէջ պահուըտելու որպէս զի երթեւեկող ճամբորդները չկասկածին իր վրայ. մէկ ժամ վերջը Պապիկ աւազակապետն, Դաւիթ ու Սահակ երեւեցան որոնք յամրաքայլ կը յառաջանային դէպի ջաղացք։ Գեղամ դիմաւորեց անոնց և պէնքով բեռնաւորեալ ձիուն սանձը առաւ Սահակի ձեռքէն ու դէպի գիւղ յառաջացաւ ըսելով անոնց. Զգուշութեամբ և առանց աղմուկի հետեւեցէք ինձ։ Գեղամի խորհիթը որ գիւղի ծայրն էր դէպի հարաւակողմը, անվտանգ ժամանեցին ամենքն ալ. նախ ձիուն վրայէն պէնքերը ցած առին, Գեղամ գաղտնի տեղ մը պահեց զանոնք. յետոյ մտան սենեկին մէջ ուր պատահաստած փոխարի մը վրայ կարգաւ նստան։ Մարէ խաթունը բարեւեց ամենուն ալ և քիչ մը յետոյ պատրաստեց սեղանը։ Նոյն գիչերը բաւական խորհրդակցեցան թէ ի՛նչ ձամբայ պիտի բռնեն Սապաթուլլահէն վրէժ առնելու համար։ Նախ պէտք է ձեռք առնուիք մեր երկուռա նապաստակը (Դաւիթ երկուռա նապաստակ անունը տուած էր Մշոյ)։ Նա այժմ պիտի կարենայ մեծ ծառայութիւն մը մատուցանել մեզ, ըսաւ Դաւիթ։ Աքանչելի՛ խորհուրդ, կրկնեց Պապիկ։ Ես ալ ձեր կարծիքը ունիմ, ըսաւ Գեղամ։ Աւազակապետն դարձեալ չարունակեց իւր խօսքն. Գեղա՛մ, դու վաղ առաւօտ գնա՛ Մշոյ մօտ. առանց մեր հոս գտնուիլը խնայ տալու, առաջնորդէ դէպի հոս, նա կընդունի իմ հրահանգները ճշդապէս կատարելու համար։—Լա՛ւ, վաղ առաւօտ արշալոյսը դեռ չի ծագած Մշոյ պիտի տեսնէք ձեր դիմացը, ըսաւ Գեղամ։ — Էհ ուրեմն, հանգստանանք վասն զի հինգ գիչեր անցած է, յարեց Դաւիթ։

(Շարունակելի)

ձել տուեր Վանի մէջ թէ Միքայէլ Նալբանեան մեռած է։ Զղիացուիր թէ լինչ ծածուկ նպատակով և պատճառներով, Թիւրք կառավարութիւնը հարկ տեսեր է այժմ այլեւս ապատ չը թողուլ, ա՛չ միայն մեռած համարուած Միքայէլ Նալբանեանը այլ և իւր բնկերները, և ապրիլ 5/17ին Սուլթանի պալատի հրամատարէն (մապէյն մուշիրի) հեռագրով եկած հրամանին համեմատ վերոյիշեալ ձերբակալուելով բանտարկուած են Նալբանեան, Օահան և Քանքանեան։

Արմենիայի խմբագրութիւնը այս վերջին տեղեկութիւններ հրատարակութեան տալով, երկու պարագայ միանգամայն կատարած կլինի. թէ՛ խմացուցած կը լինի որ Թիւրք կառավարութեան հարստահարութիւններն դադրելէ հեռի են և երբ մի տեղ կը մեղմացունէ մի քիչ, մի ուրիշ տեղ (ինչպէս Բօնեա, Երզնկա ևն.) կը սաստկացունէ և կը բազմապատկէ, և թէ ապացուցած կը լինինք որ Արմենիա ի ուղղութիւնն է մի միայն ճշմարտութիւնը հրատարակել և երբ տեսնէ թէ անճշդութիւններ կամ չափազանցութիւններ կան իրեն հաղորդուած հարստահարութիւնների լուրերին մէջ, ինք ամենէն յառաջ կը փութայ յայտնել զանոնք։ Ճշմարտութիւնը միայն կուզենք մենք առաջնորդ ունենալ մեզ և որդէն քրատնելի ճշմարտութիւններ չափէն աւելի դիպուած կան Թրքական բարբարոսութիւնների և հարստահարութիւնների մի երկար շարք կազմելու համար։

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պօլսի Սարըեար գիւղին մէջ, չարագործներ դիշերանոց մտնելով Բարսեղեան Սահակ էֆէնտիի տունը, սպաններ են Տիկին Թագուհի Բարսեղեանը (որ քոյրն է Վահ. Գէորգ Պէյ Երամեանի, բնակեալ ի Փարիզ) և անոր որդի Սարգիս էֆէնտին և կողոպտեր են սենեկին մէջ գտնուածները. Բարձր. Աբրահամ փաշա Երամեան որի հօրաքոյրն է Տիկին Բարսեղեան, այս գոյժ լսածին պէս Սուլթանի պալատը դնացեր և պատմեր է դէպքը։ Սուլթանը անմիջապէս հրաման հաներ է խուզարկել չարագործներն և մի քանի կասկածելի անձեր բռնուելով հարցաքննութեան ենթարկուած են, բայց դեռ չեն գտնուած մարդասպաններն։

Մեծ հանդէսով փոխադրուած են սպանուածներն մարմիններն Սարըեարէն Իսկիւտար ուր ամփոփուած են Բարսեղեան գերդաստանի գտնուած։

— Մայիս 24/5 յունիսին Կ. Պոլիս հրատարակուած Թիւրք լրագիրներն կը գրեն թէ Բուխարդի երեւելիներէն Գալանճեան Յակոբ էֆէնտին նախորդ օր հասած է Կ. Պոլիս և թէ այդ անձ պատերազմին ժամանակ մեծ ծառայութիւններ ըրած է Թիւրք զօրքերին և Ժողովրդին։

Բուխարդէն մեզ հաղորդուած և Արմենիայի 74րդ թուով հրատարակուած մի նամակ կիմացունէը որդէն մեր ընթերցողներն թէ այդ անձ Թիւրք կառավարութենէն վարձուած մի լրտես է որ իւր պաշտօն Պուլկարիոի Հայերին մէջ գործադրելէ յետոյ պիտի դրկուի Հայաստան։

ՀԱՑԵՐ Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ

Վ.Ա.Ռ.Ն.Ա.Էն մեզ գրուած մի նամակ կը գտնենք հետեւեալ տեղեկութիւններն։

«Ն. Ա. Բարձրութիւն Ֆէրիհնանա Ա, Պուլկարիոի Իշխանը, իւր Իշխանապետութեան գլխաւոր քաղաքներն այցելած ժամանակ երբ Վառնա եկաւ (ապրիլ 30/11 մայիս), այցելեց բուլղարներն և լատիններն եկեղեցիներն։ Հայերը եւս հարկ եղած պատրաստութիւններն առաջուց տեսած լինելով, եկեղեցւոյն բակը և մինչեւ իսկ դուռներն ծաղկեայ պսակներով զարդարած և գոյնզգոյն դրօշակներ պարզած էին։ Պատ. Թաղ. խորհուրդը հայ ժողովրդի յայտնած փափաքին համեմատ գնաց հրաւիրել Նորին Ա. Բարձրութիւն Իշխանը, որ չմերժելով հայ ազգի հրաւէրն, այցելեց նաեւ մեր եկեղեցի, իւր հետ ունենալով Արտաքին գործերի նախարարն և իւր թիկնապահները։ Իշխանը մեծ վառքով ընդունուեցաւ մեր եկեղեցի այցելած ժամանակ. 1000էն աւելի հայ և օտարազգի ժողովուրդ ներկայ կը գտնուէին որոնց արձակած «ուռա՛» աղաղակը մինչեւ երկինք կը բարձրանար։ Ն. Ա. Բարձրութիւն Իշխանի ներկայութեամբ հայ քահանայներն ըստ պատշաճի մաղթանքներ անելէ յետոյ, 10–11 տարեկան մի տանուհի ճարտար և սրտայոյզ արտասանութեամբ կարդայ Ֆրանսերէն լեզուով մի գեղեցիկ ծանօթագրութիւն որ յուզուելու Իշխանը և իւր ձեռքով գգուելէ մատաղ օրիորդն, յայտնելով նաեւ Աբժ. քահանայներէն իւր շնորհակալութիւնները ինչպէս և ի փոխարէն հայ ազգէն տեսած ընդունելութեան։ Այս անգամ ստոյգ աղբիւրէ կիմացնամ թէ Ն. Ա. Բարձրութիւն Ֆէրտինանա Իշխանը 1000 ֆրանգ նուէր տուած է ինպատոս հայ վարժարաններին, տեղիս Թագ. խորհրդին միջոցով։»

ՏԵՂԱԿԱՆ

Լիոնի ճանապարհով Փարիզի և Մարսէյլի մէջ թէլեֆօնի մի գիծ հաստատելու աշխատութիւններն վերջացած են։ Կը յուսացուի որ յուլիսի սկիզբները գործածութեան դրուի այդ գիծ։

—Վաղը, կիրակի, դինուորական Ձիարշաւի հանդէս պիտի կատարուի Բարք Պօրէլլի մէջ, Մամուլի Սէնտիքային կարդադրութեամբ։ Հանդէսէն եղած շահը կը նուիրուի բարեգործական նպատակի։ Նախարարապետ Պ. Ֆլօքէ, Արտաքին նախարար Պր. Բէթթայլ և Մարսէյլի երեսփոխանները պիտի գան ներկայ գտնուիլ այս հանդիսի, անոր աւելի շքեղութիւն տալու համար։ Առաւօտեան ժամ 9ին հանդիսական զարդարուած կառքերն ճանբայ պիտի ելնեն Ժօլիէթի հրապարակէն և գլխաւոր փողոցներէն անցնելով պիտի երթան։ Հանդիսավայրին մէջ ներկայ գտնուելու համար տոմսակներուն դիներն են 20էն մինչեւ 1 ֆրանգ։

Ի նպաստ Հ. Զ. Միութեան Քիօսքիճեճի 10 Հայ սրճարաններուն մէջ հաստատեալ գանձանակներուն միջի 1887 ապրիլ 30 գոյացեալ արդիւնքը

	Թղթդրմ.	Ֆր. սնթմ.
1. Յարութիւն Մանուկեան		12,
2. Յարութիւն Պաղտասարեան		8,90
3. Յովհաննէս և Յարութիւն		2,40
4. Դասպար և Մկրտիչ		5,25
5. Հաճի Նաղար Մնացականեան		17,30
6. Մարտիրոս Սէֆէրեան (խոհարար)		8,65
7. Թէոփիլէ Խաչատուրեան		00,00
8. Յակիմ Յովհաննէսեան		00,00
9. Կարապետ Մանուկեան		10,70
10. Գաբրիէլ Գալանճեան		10,30
Գումար		75,50
Մարսէյլի Կ. Վարչութեան իրկուած ոսկի դրամ ֆր.	60	
Ցիշեալ ոսկի գումարին աճիւն	10,50	
Թղթատարութեան ծախս	—,75	
Ի պահեստի մնացած	4,25	75,50

4/16 մայիս. 1888
Քիօսքիճեճ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Շնորհակալութեամբ ստացանք Վիէննայի Մխիթարեան Պատ. Մխանութեան «Հանդէս Ամսօրեայ»ի յունիսի ամսաթերթը որի բովանդակութիւնն է հետեւեալը.

Բանասիրական — Տառադարձութեան խնդիր. — Հետազօտութիւնք նախնեաց առակօրէնին վրայ.—Գրական—Բաժին.—Գաւառաբերութիւն հայ լրագրութեան. — Տնտեսագրական —Նորահատ մեծադիր հայերէն տառեր հրատարակական ծանուցմանց համար. — Վատիկանեան արուեստանոցին (պատկերազարդ). — Նորալուրք. —Տնտեսական. — Մանրալուրք.—Գաղափարական տեսութիւն։

Ամերիկայի Ֆրէտերիկ կայսրի մահը

Նախորդ թուով հրատարակած էինք արդէն «Արտասահմանի լուրեր»ի մէջ թէ Ամերիկայի Ֆրէտերիկ Գ կայսրի հիւանդութիւնը ծանրացած է։ Հեռագիրը չուշացաւ բերել այն տխուր լուրը որ երկար ժամանակէ ի վեր երկիւղ կար չուտով լսելու։ Ֆրէտերիկ կայսրը մեռած է Բօցտամ, Ֆրիէտրիխսքրօնի գղեակին մէջ, երեկ առաւօտ, ժամ 11ը մի քանի վայրկեան անցած, չնչասպառ ըլլալով իւր կոկորդի հիւանդութեան։

Ֆրէտերիկ Գ կայսրը ծնած էր Բօցտամ, 1831 հոկտ. 18ին. ուրեմն մեռաւ 57 տարեկան հասակին մէջ գրեթէ, 3 ամիս և մի քանի օր թագաւորութիւն վարելէ յետոյ։

Ֆրանսական Հանրապետութեան Գ. Նախագահը, ինչպէս և բոլոր պետութիւնների Գլուխներն, ցաւակցութեան հեռագիրներ ղրկած են կայսրուհուն։

Կը կարծուի թէ երկուշաբթի օր կը լինի յուղարկաւորութեան հանդէսը, Բօցտամի մէջ։

Նոր կայսրը, Վիլհելմ Բ, որ յաջորդեց իւր հօր, ծնած է 1859 յունվար 27ին։

ԵԱՖԱՒԻ ՄԻՋԱԴԷՊԸ

Փարիզի «Էվէնըման» լրագրին հաղորդած են եաֆացէն հետեւեալը.

«500էն աւելի կրօնամոլներ փողոցին մէջ յարձակեցան Ֆրանսական հիւանդանոցի բժիշկ Պ. Բասքալինիի, իւր թարգման Մանսուրի և Պ. Տամիանիի վրայ. քարերով, փայտերով և չիշեր նետելով հալածեցին անոնց որոնք պարսկական հիւպատոսի միջամտութեամբ հազիւ ազատեցան ամբոխին ձեռքէն և ապաստանեցան անոր դիւանատեղիակը։ Պ. Բասքալինի ծանրապէս վիրաւորուած է։ Գլխին որուած վտանգաւոր հարուածներէն գլխարիկը պահպանած է զինք։ Ֆրանսական դեր–հիւպատոսը իսկոյն գնաց պարսկական հիւպատոսարանը ուր հարցաքննութիւն անելէ յետոյ գնաց կառավարչին մօտ։ Կառավարիչը 2 ժամէն աւելի սպասեցունել տուաւ դանգատող երեք Ֆրանսացիներն և երբ արժան համարեց ընդունիլ զիրենք, յայտարարեց թէ անիրաւ են։

«Բայց դեր–հիւպատոսը փոխարինութիւն պահանջեց ազդուպէս։ Այժմ Երուսաղէմի Ֆրանսական ընդհանուր հիւպատոս Պ. Լբոռւ իր ձեռք առած է գործը և յանցաւորներին պատժուիլը խնդրելու համար դիմած է Երուսաղէմի փաշային որմէ կախում ունի եաֆայի կառավարիչը։»

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒԻՐԵՐ

Սուլթանը հրամայեր է որ Թիւրքիոյն Բումելի ղրկուելիք տեղական ապրանքներուն մաքսատուրքը որ առաջ 100ին 8 կառնուէր, այժմ 100ին մէկ միայն առնուի։

— Պերլինէն կը հեռագրեն թէ ռուս զօրավար Իշխան Մէնչիքոֆ, Զարին Թիկնապահը, Պերլին եկած է մի գաղտնի պաշտօնով։ Իշխան Պիսմարքի հետ խորհրդակցեր է։

— Հունգարական Պատուիրակներուն արտաքին գործերի Ճանճնաժողովին հինգշաբթի օր արած նատին մէջ, Արտաքին գործերու նախարար Պրն. Քալնօքի մի ճառ խօսեցաւ որի մէջ այս յայտարարութիւնները արաւ. «Բաղդատմամբ այս տարու սկիզբն եղածներին, այժմ աւելի խաղաղական մի դրութեան մէջ կը գտնուինք.

բայց Պետութիւնները իրենց դիրք ապահովելու և իրենց շահերը պահպանելու համար պարտաւորուած են աւելցուցնել իրենց պաշտպանութեան միջոցներն որպէս զի կարենան հանդարտութեամբ սպասել այն դէպքերի որոնք կրնան յանկարծակի երևան գալ։ Պուլկարական խնդիրը անչուշտ մեզ համար չատ աւելի կարեւոր մի խնդիր է քան թէ Եւրոպական ուրիշ պետութիւնների մեծ մասին համար. այսու ամենայնիւ, միայն Պալքաններու մէջ պէտք չէ փնտռել խաղաղութեան վրդովման սկզբնապատճառները, այլ Եւրոպայի ընդհանուր դրութեան մէջ, կառավարութիւններէն աւելի ժողովուրդներին իրար դէմ ունեցած հակակրութեան մէջ։ Ոչ ոք կրնայ տարակուսիլ թէ Ալմանիան և Իտալիան հետ մեր դաշնակցութիւն խաղաղութեան մի գրաւական է և միանգամայն ամենաօգտակար և արդիւնաւոր քաղաքականութիւն մեզ համար։ Պալքանեան ժողովուրդներն չահերն եւրոպական չահեր են։ Մեր դիրք աւելի զօրացած է, Անգլիան քաղաքական ուղղութիւնն ալ մեր քաղաքականութեան կատարելապէս համապատասխան լինելով։»

—Թունուզի պէյութիւնը յայտարարեր է որ յուլիս 1էն սկսած Թունուզական փոստատուներ պիտի հաստատուին, հետեւապէս օտար պետութիւնների փոստերն պիտի վերջուին Թունուզէն։ Ֆրանսան և Իտալիան փոստեր ունին այնտեղ։

— Անգլիան պաշտօնապէս յայտնեց իր հաւանութիւն Սուէզի ջրանցքի չէզոքացման վերաբերեալ պայմանագրին, Մուլթանին անոր մէջ մտցուցած երկու բարեփոխութիւններովն մէկտեղ։ Այդ պայմանագիրը պիտի հաղորդուի մեծ պետութիւններուն։

—Ամերիկայի Միացեալ Նահանգների Ֆիլատելֆիա քաղաքին մէջ մի մեծ մրցման գումարուեր է և այդ մրցման պրոշման համեմատ հեռագրեր են Անգլիա Գ. Գ. Գլատսթընին և Բարնէլին, բողոքելու համար այն լուրերի դէմ որոնք կուզեն հաւատացնել թէ Իրլանտական դատը իր ոտացած համակրութիւն կորսուած է Միացեալ Նահանգներուն մէջ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

CONSTANTIN P. CHÉHIANTZ
Négociant-commissionnaire
à Milan (Italie)

Հայ վաճառականները որոնք կը փափագին ուղղակի յարաբերութեան մտնել Գ. Կոստանդին Շէհեանցի պատուաւոր Հայ վաճառատան հետ, յանձնարարութեամբ ամեն տեսակ ապրանքներ գնելու կամ ծախելու համար, պէտք է դիմեն ուղղակի հետեւեալ հասցէին.

Monsieur Constantin P. Chéhiantz
No 18, Via Lauro, 18
Milan (Italie)

ՀԱՅԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՕՏԱՐՆԵՐԻ ԱՋԲՈՒՄ

ՓՈՐՁի խմբագրապետ Մեծ. Պրն. Աբգար Յովհաննէսեանի կարդացած մի հրապարակական դասախօսութիւնն է Հայկական խնդրին նկատմամբ Թիֆլիսի ժողովարանին մէջ 1879 թ. մայիսի 17ին։ Կը ներկայացունէ Եւրոպացիներուն նկատողութիւնները Հայերուն մասին և կը նկարագրէ Լոնտոնի Անգլօ–Հայկական Մատնաժողովին ապագայ միխինկը 1878 յուլիսին, Հայկական խնդրին համար։ Կը ծախսուի «Արմէնիա»ի խմբագրատունն։ Դինն է 1 ֆր., փոստի ծախքը մեր վրայ։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ դիրքերն կարելի է ստանալ Արմէնիայի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած դիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ դիրք չղրկուիր։

Հայրենասիրական հրատարակութիւններ

1. Բուդդար առազաստպետ. (Քրիստոնեաներուն հանդուրժութեանը համար Թիւրքիոյ ստորագրած դաշնադրութեան մեռած առաւել լինելը ցոյց կուտայ. կը նկարագրէ մի մահմետական գաղանութեան զոհ եղած մի բուլղար ընտանիքի սրտաճմլիկ դրութիւնը և վրիժառութեան համար դործնական միջոցներ ցոյց կուտայ)։
20 ստդ.

2. Ժաննա տ'Արք—Գաղղիոյ ազատող (Ետաերին յայտնի է այս մանկամարդ հովուհուն, այս գիւղացի աղջկան հայրենասիրական եռանդը որով մի խստմբ մարդիկ գլուխը ժողված, հնանալի յաղթութիւններ տարաւ Անգլիացիներուն դէմ երբ ատենք ամեն կողմէ ճնշած և նեղը ձգած էին Ֆրանսան)։
15 ստդ.

3. Նեղա — Տատիս պատմածը (Նիւթը առնուած է Թիւրքերուն սերտապետութեան ժամանակ Գուլկարիոյ մէջ Տէրիպաշներուն սրած բարբարոսութիւններէն)։
20 ստդ.

4. Դօնջօ — Բուլղար առազաստպետի պատմածը (Հարատահարուած հայրենիքի վրէժն առնելու համար՝ հնոջ մանուկներու թեամբ կազմուած մի ազգակային խմբի դործերն կը պատմէ)։
20 ստդիմ.

Վերոգրեալ տետրակներն կը ղրկուին իրենց առջեւ նշանակուած դիներով, փոստի ծախքը Արմենիայի խմբագրութենէն վճարուելով։ Ով որ 20 տետրակ գնէ մէկ անգամէն, այսինքն հինգ օրինակ իւրաքանչիւր տետրակէն, 0/0ին 15 զեղչ կանենք վերոգրեալ գներին վրայ, այսինքն կը տանի 20 տետրակին համար 3 ֆր. և 20 ստդիմ, փոխանակ 3 ֆր. և 75 ստդիմի։

Խրիմեան Հայրիկ—ՎԱՆԳՈՅԺ (Ամեն. Խրիմեան Սրբազանի գրած սրտաշարժ, խրատական և ազատաշունչ տետրակը 1876ի վանի հրդեհին նկատմամբ)։
70 ստդիմ.

Գամառ. Քաթիպա — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. (Ազգային առաջնակարգ բանաստեղծ Ռ. Պատկանեանցի տաղաչափական և հրահանգիչ բանաստեղծութիւնները կը պարունակէ. ակիզբն դրուած է հեղինակին պատկերը)։
2 ֆրանգ։

Գ. Աբովեանց—ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. (Ամեն Հայի համար անհրաժեշտ պարտք է իմանալ իւր ազգի պատմութիւնը, դիտնալ թէ ի՛նչպէս սկսեր է իւր ազգ, ո՛րտեղ ունեցեր է իւր հայրենիք, ի՛նչպէս եկեր հասեր է մեր օրեր, ո՛րոնք եղած են իւր երջանկութեան և իւր թշուառութեան պատճառները են.։ Դէպրդ Աբովեանց որ Տփղիսի Ներսիսեան վարժարանին մէջ Հայոց պատմութեան ուսուցիչ էր, գրած էր այս «Համառօտութիւն Հայոց ազգի պատմութեան»ը որ մինչև այժմ երրորդ տպագրութեան արժանացած է։) 2 ֆր.

ՍԻՄՈՒԱՆ կամ Համապատում Հայկական Կիլիկիոյ. Հ. Ղեւոնդ Ալիշանի այս հրաշակերտ՝ ոչ միայն ամենամեծ պատիւ կը բերէ բազմահմուտ հեղինակին Հայրենասիրութեան և Հայրենասիրական զգացմանն, այլ և մեծ պարծանք է ամբողջ Հայութեան համար որի վառաւոր յիշատակներն աւերակներուն մէջէն և դարաւոր փոշիներուն տակէն դուրս բերել յաջողած է։ Կիլիկիան, մեր վերջին թագաւորութեան օրրանն ու դերեզմանը, ներկայացուած է այս գրքի մէջ իւր ամեն մանրամասնութիւններով։ Ընթերցողը կը գտնէ այնտեղ պատմական, աշխարհագրական, տեղագրական, բնախօսական ևն. ևն. հին ու նոր տեղեկութիւններ, Հայ թագաւորների հրովարտակներ, իշխանական, դատավարական ևն. հետաքրքրաշարժ ծանօթութիւններ որոնք Ալիշանի պէս բազմահմուտ մի անձի ուսումնասիրութեան և խորագրկութիւնների արդիւնքն եղած են։ Հայ դրականութեան մէջ երեւցած այդ հրաշակերտ՝ որ Հայրենասէրը վարդապետին Հ. Ղեւոնդ Ալիշանի ճարտար և անխոնջ ձեռքով կանգնած է ցոյց տալու համար մեր Կիլիկեան թագաւորութեան փառքն ու պարծանքը, արժան է որ ջարդարէ ամեն մէկ Հայի գրադարանը զի ամեն Հայ իրաւունք ունի պարծենալու անով։

Դիքին տետրը կայ վեր. հեղինակին պատկերը։ Ամբողջ գործը՝ բացի մի ընդարձակ ներածութենէ, կը պարունակէ 592 երկիջեան երեսներ։ Տպագրուած է ընտիր տետրակ թղթի վրայ և ունի 235 գեղեցկագիծ պատկերներ որոնք կը ներկայացունեն կիլիկիոյ գեղեցկագոյն տեսարանները։ Ունի նաեւ կիլիկիոյ աշխարհագրական նրբագիծ մէկ քարտէզը որ առանձինն եւս կը ծախսուի Արմենիայի խմբագրատունը, ինչպէս նշանակուած է յետադրեալ ծանուցումներին մէջ։

ՍԻՄՈՒԱՆի առաջնակարգ տեսակը (լաւագոյն թղթի վրայ տպագրուած և 15ի չափ գունաւոր պատկերներով և պարգեւագիրներով) 55 ֆրանգ։

Նոյնը Բ կարգի (առանց գունաւոր պատկերների) 40 ֆր.

Նոյնն ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆը (Այս վերջին տեսակ որ 1885 թ. «Բազմավէպ»ի իրը վերջին եռամսեայ պրակն հրատարակուած է, աշխարհաբար լեզուով քարտուածներ կը ներկայացունէ ՍԻՄՈՒԱՆէն որ գրուած է գրաբար լեզուով—թէև ոչ խրթին և անհասկանալի ոճով — և ծանօթութիւններ կուտայ Սիսուանի պարունակութիւններուն վրայ այնպէս որ զայն չունեցողին ցանկութիւնը կը դրգռէ ունենալու համար և ունեցողին ալ մի լաւ առաջնորդ կը լինի այդ ընդարձակ աշխատութեան մէջ դիւրով աչքով շրջելու և հետազօտելու համար։ 3 ֆր. 50 ստթ.

Գամառ. Քաթիպա — ԱԶԱՏ ԵՐԳԵՐ. (Գամառ. Քաթիպայի «Բանաստեղծութիւններ»էն Ազատ երգերի մասը առանձին տետրակով տպագրուած), 20 ստդիմ։

ՁԱՅՆԱԴՐԱԼ ԵՐԳԱՑՈՂՈՒԹԻՒՆՔ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ. Բ. տպագրութիւն, (արտպագրուած ի Ս. Էջմիածին) 10 ֆր.

Բաֆֆի—ԿԱՅԾԵՐ. Ա և Բ հատորներ. Ազգային վիպագիրը Պրն. Բաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐը։ Ա յս գիրք կը ծանօթացունէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի պատանդ ցեղերի և հայերի գրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողներն։ Մի խօսքով, թէ՛ իրը ազգային բնաւոր վիպասանութիւն և թէ՛ իրը հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրք ամեն հայրենասէր Հայի տունն։

Գինն Ա. հատորին 7 ֆր., Բ հատորին 8 ֆր. և 30 ստթիմ։ Երկու հատորներն միասին գնով 15 ֆր.։

ՏՆՕՐԻՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՑԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.